ԵԴ1/0350/01/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

21 հոկտեմբերի 2024 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԵԴ1/0350/01/24 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 14-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2023 թվականի դեկտեմբերի 15-ին Հակակոռուպցիոն դատարանում ստացվել է թիվ 69138623 (ՀԿԴ/0297/01/23) քրեական վարույթը՝

- Արթուր Պավելի Հակոբյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 46-399-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 476-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 255-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով և 457-րդ հոդվածի 2-րդ մասով,

- Բենյամին Աշոտի Ասատրյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 46-399-րդ 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետով, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով,

- Նորիկ Լաերդի Միքաելյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 46-399-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով,

- Հովհաննես Հրաչի Հակոբյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 396-րդ հոդվածի 2-րդ մասով,

- Միսակ Արամի Ազնաուրյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 335-րդ հոդվածի 1-ին մասով,

- Սարո Գևորգի Դաշտոյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 476-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով,

- Զաքար Հայկայի Հայրիկյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով:

Հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի դեկտեմբերի 18-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0297/01/23 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի փետրվարի 19-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0297/01/23 քրեական վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի փետրվարի 29-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/0350/01/24 (ՀԿԴ/0297/01/23) քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի մայիսի 7-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին:

2. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի մայիսի 20-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/0350/01/24 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2.1. 2024 թվականի օգոստոսի 19-ին թիվ ԵԴ1/0350/01/24 քրեական վարույթը վերաբաշխվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս.Ռուշանյանին:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի օգոստոսի 20-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/0350/01/24 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 27-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/0350/01/24 քրեական վարույթից մեղադրյալ Արթուր Պավելի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նոր վարույթ անջատելու մասին:

2.2. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 27-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/0350/01/24 քրեական վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի հոկտեմբերի 14-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/0350/01/24 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի հոկտեմբերի 15-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների փաստական և իրավական նկարագրությունը.</u>

5. 2023 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ Արթուր Պավելի Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 46-399-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 476-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 255-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով և 457-րդ հոդվածի 2-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի՝ «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշմամբ ամրագրված նշված նյութերի շրջանառության կարգը, պայմանները, կիրառվող սահմանափակումներն ու արգելքները սահմանող դրույթների պահանջները, ներգրավված լինելով իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը Բենյամին Սասպրյանի հետ ընդգրկվել է Մարտիրոս Աղայանի կողմից տևական ժամանակ ծանր և առանձնապես ծանր հանցանքներ կատարելու՝ մաքսանենգությամբ ապօրինի ԵԱՏՄ մաքսային և ՀՀ պետական սահմանով տեղափոխված թմրամիջոցների վաճառքով զբաղվելու նպատակով 2020 թվականի սկզբներին ստեղծված համախմբված կազմակերպված խմբի՝ հանցավոր կազմակերպության (հանցավոր համագործակցություն) կազմում: Մարտիրոս Աղայանը, Բենյամին Սասպրյանը և Արթուր Հակոբյանը, ղեկավարելով*

հանցավոր կազմակերպության գործունեությունը, դրա կազմում ընդգրկել են Նորիկ Միքաելյանին, Գոո Ասատրյանին, Հովհաննես Հակոբյանին, Միսակ Ազնաուրյանին, Զաքար Հայրիկյանին, Վիկտորյա Միրզոյանին, Սարո Դաշտոյանին, Հայկ Գրիգորյանին և այլ անձանց, մշակել են հանցավոր ծրագրերը, կատարել դերաբաշխում, կազմակերպության անդամներին տվել հանձնարարություններ և առաջադրանքներ, իրականացրել են հանցավոր ճանապարհով ձեռք բերված ֆինանսական միջոցների կառավարում, վերահսկում և բաշխում, միջոցներ են ձեռնարկել կազմակերպության նոր անդամների հավաքագրման, հանցավոր նպատակների իրագործման համար այլ անձանց ներգրավման ուղղությամբ: Ի թիվս մյուս գործառույթների՝ հանցավոր կազմակերպության ղեկավարներ Մարտիրոս Աղայանը, Բենյամին Ասատրյանը և Արթուր Հակոբյանը կայուն կապ են ստեղծել Իրանի Իսլամական Հանրապետությունում իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ և մաքսանենգությամբ զբաղվող Ագբար (կենսագրական մյուս տվյալները ճշտվում են) անունով անձի հետ, ով հանցավոր կազմակերպության ղեկավարների պատվերով պարբերաբար ապահովել է առանձնապես խոշոր չափերով տարբեր տեսակի թմրամիջոցների մաքսանենգությամբ՝ առանց մաքսային հսկողության տեղափոխումը ՀՀ տարածք և ԻԻՀ-ի հետ սահմանին հարակից տարածքում հանձնումը հանցավոր կազմակերպության ղեկավարների առաջադրանքով գործող անձանց: Հանցավոր կազմակերպության ղեկավարներ Մարտիրոս Աղայանը, Բենյամին Ասատրյանը և Արթուր Հակոբյանը, կատարելով մաքսանենգության առարկա հանդիսացող թմրամիջոցները ձեռք բերելու և իրացնելու վերաբերյալ նախապես իրենց կողմից տրված խոստումը, ապահովել են թմրամիջոցների հետագա տեղափոխումը ՀՀ տարածքով և իրացումը: Ծավալված հանցավոր գործունեության ընթացքում ձևավորված վստահության արդյունքում հանցավոր կազմակերպության ղեկավարները թմրամիջոցներ են ձեռք բերել նաև դրանց դիմաց հետագայում՝ իրացումից հետո վճարելու պայմանով: Մասնավորապես հանցավոր կազմակերպության կողմից իրացման նպատակով առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցի հերթական խմբաքանակը ձեռք բերելու համար Արթուր Հակոբյանը հանցավոր կազմակերպության մասնակից

Վիկտորյա Միրզոյանին հանձնարարել է մեկնել ԻԻՀ և մնալ այնտեղ հանցավոր կազմակերպության գործունեության համար ուղարկվող թմրամիջոցի խմբաքանակի դիմաց վճարումը երաշխավորելու նպատակով: Ի կատարումն տրված հանձնարարության՝ Վիկտորյա Միրզոյանը 2021թ. օգոստոս ամսին մեկնել է ԻԻՀ, որտեղ շուրջ 1 ամիս մշտապես գտնվել է Ագբարի տանը, որի ընթացքում վերջինս, մշտական հեռախոսային կապի մեջ գտնվելով Մարտիրոս Աղայանի հետ, ինքնությունը չպարզված անձանց օժանդակությամբ կարողացել է մաքսանենգությամբ ՀՀ ուղարկել 4 կգ «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց: Ընդ որում՝ Ագբարի տանը գտնվելու ընթացքում վերջինիս և Մարտիրոս Աղայանի միջև տեղի ունեցած խոսակցությունից հետո, Վիկտորյա Միրզոյանի նկատմամբ առաջացած կասկածներով պայմանավորված, Ագբարը վերցրել է նրա «Սամսունգ Ջ 2» մոդելի բջջային հեռախոսը՝ ՀՀ վերադառնալուց հետո այն վերադարձնելու պայմանով, սակայն նշված բջջային հեռախոսը այդպես էլ Վ.Միրզոյանին չի վերադարձվել, իսկ 2022 թվականի հոկտեմբերի 21-ին նշված բջջային հեռախոսը հայտնաբերվել է Բենյամին Ասատրյանի բնակարանում կատարված խուզարկությամբ:

Հանցավոր կազմակերպության մասնակիցները, ընդհանուր նպատակների իրագործման համար ստանձնելով կազմակերպության ղեկավարների տված հրահանգներն ու ցուցումներն իրականացնելու պարտավորություն՝ ստացել են առավելապես Իրանի Իսլամական Հանրապետությունից ուղարկված, իրացման համար նախատեսված առանձնապես խոշոր չափերով ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշման թիվ 1 հավելվածում ներառված տարբեր տեսակի թմրամիջոցներ, դրանք տեղափոխել, բաժանել են տարբեր քաշերի, փաթեթավորել, տեղադրել են թաքստոցներում, ապա իրացրել են ինչպես առձեռն, այնպես էլ տեղեկատվական և հեռհաղորդակցական համակարգերի կիրառմամբ: Նշված հանցավոր գործունեության իրականացմանը հանցավոր կազմակերպության մասնակիցներից բացի ներգրավվել են նաև այլ անձինք:

Թմրամիջոցների իրացումից ստացված առանձնապես խոշոր չափերով ֆինանսական միջոցների հանցավոր ծագումը, դրանց իրական բնույթը թաքցնելու,

հանցավոր ճանապարհով ստացված ֆինանսական միջոցների տեղաշարժն ու տեղաբաշխումը քողարկելու, դրանց օրինական տեսք հաղորդելու նպատակով հանցավոր ճանապարհով ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով միջոցների կենտրոնացումը և դրանով պայմանավորված իրավասու մարմինների տեսադաշտում հայտնվելը բացառելու, հնարավոր բացահայտումից խուսափելու և հետագա հանցավոր գործունեությունն անխոչընդոտ շարունակելու համար հանցավոր գործունեությունից գոյացած ֆինանսական միջոցներն ստանալու, մասնատելու և շրջանառելու համար օգտագործվել են բազմաթիվ էլեկտրոնային դրամապանակներ, բանկային հաշիվներ և բուքմեյքերական ընկերությունների օգտահաշիվներ: Միևնույն ժամանակ հանցավոր կազմակերպության ղեկավարների կողմից հանցավոր գործունեությանը ներգրավված անձանց հանձնարարվել է ֆինանսական միջոցների կապը հանցավոր գործունեության հետ հնարավորինս քողարկելու նպատակով առավելապես օգտագործել վճարային տերմինալների միջոցով անանուն կանխիկ մուտքագրումները: Նշված վճարային գործիքներին մուտքագրված ֆինանսական միջոցները հետագայում փոխանցվել են տարբեր էլեկտրոնային դրամապանակների, բանկային հաշիվների, բուքմեյքերական ընկերություններում բացված օգտահաշիվների, կանխիկացվել կամ այլ կերպ տնօրինվել են հանցավոր գործունեությանը ներգրավված անձանց կողմից:

Հանցավոր կազմակերպության ղեկավարներ Բենյամին Ասատրյանի, Արթուր Հակոբյանի և մասնակիցներ Զաքար Հայրիկյանի, Սարո Դաշտոյանի, Հայկ Գրիգորյանի, Վիկտորյա Միրզոյանի կողմից օգտագործված էլեկտրոնային սարքերով հասանելիություն է ստացվել 193 էլեկտրոնային դրամապանակների: Հիշյալ դրամապանակներին և Բենյամին Ասատրյանի 4318290090918869 համարի բանկային քարտին մուտքագրվել է առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 2.207.175.394 ՀՀ դրամ գումար:

Բացի այդ, Արթուր Հակոբյանը, գտնվելով կալանքի տակ և պահվելով «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում, իրացնելու նպատակով ապօրինի ձեռք է բերել և պահել առանձնապես խոշոր չափերով՝ 0,835 գրամ քաշով տնայնագործական եղանակով պատրաստված «Հերոին» տեսակի թմրամիջոց:

Բացի այդ, Արթուր Հակոբյանը հանցավոր կազմակերպության անդամներ Հայկ Գրիգորյանի, Սարո Դաշտոյանի և Վիկտորյա Միրզոյանի ներգրավմամբ, գիտակցելով իր տրամադրած տեղեկատվության կեղծ լինելը, կատարել է սուտ մատնություն, որը զուգորդվել է անձին առանձնապես ծանր հանցանքների մեջ մեղադրելով և մեղադրանքի արհեստական ապացույցներ ստեղծելով:

Դրանից բացի, Արթուր Հակոբյանը Արմեն Հարությունյանի և ինքնությունը չպարզված անձի հետ նախնական համաձայնությամբ օգտագործել է իրավունք վերապահող կեղծ փաստաթուղթ և խարդախությամբ հափշտակել խոշոր չափերով 4.000.000 ՀՀ դրամ գումար:

Այսպես.

Հանցավոր կազմակերպության վերը նկարագրված գործունեության շրջանակներում դրա մասնակից հանդիսացող Նորիկ Միքաելյանը պարբերաբար Բենյամին Ասատրյանից ձեռք է բերել թմրամիջոցներ՝ վերջինիս առձեռն փոխանցելով տարբեր չափի գումարներ և հանցավոր կազմակերպության մասնակից Գոռ Ասատրյանի հետ միասին ձեռնամուխ է եղել նշված թմրամիջոցների ապօրինի իրացմանը: Հերթական անգամ, 2020 թվականի մայիսի 18-ին Նորիկ Միքաելյանը իրացնելու նպատակով Բենյամին Ասատրյանից ապօրինի ձեռք է բերել առանձնապես խոշոր չափերով՝ 15,12 գրամ քաշով «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց, որից 5,02 գրամը, Մուշեղ Կոստանյանի և Նորիկ Միքաելյանի միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, վերջինիս առաջադրանքով Գոռ Ասատրյանը 2020 թվականի մայիսի 24-ին՝ ժամը 19:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Կասյան փողոցի թիվ 3 շենքի բակում «Արարատ» տեսակի ծխախոտի տուփով փոխանցել է Հրակ Թաշջյանին և հայտնել, որ դրա մեջ առկա է 5 գրամ «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց, իսկ Հրակ Թաշջյանը թմրամիջոցի դիմաց նրան է փոխանցել 100.000 ՀՀ դրամ գումար: Թմրամիջոցը վերցնելուց հետո Հրակ Թաշջյանը կապ է հաստատել Մուշեղ Կոստանյանի հետ և նրան հայտնել, որ 10 գրամի փոխարեն իրեն փոխանցվել է 5 գրամ «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց: Այնուհետև Մուշեղ Կոստանյանի հանձնարարությամբ Հրակ Թաշջյանը զանգահարել է Նորիկ Միքաելյանին և պայմանավորվածություն ձեռք բերել հաջորդ

օրը՝ ժամը 15:00-ին, նույն վայրում Նորիկ Միքաելյանին կամ Գոռ Ասատրյանին հանդիպելու և մյուս 5 գրամ «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցը ձեռք բերելու վերաբերյալ: Դրանից հետո նույն օրը՝ ժամը 20:05-ին, թմրամիջոց ապօրինի իրացնելու կասկածանքով Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայի թիվ 85 հասցեի հարակից տարածքից Հրակ Թաշջյանը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժին, որտեղ վերջինիս անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է 5,02 գրամ «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցը:

Հաջորդ օրը՝ 2020 թվականի մայիսի 25-ին՝ ժամը 12:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Կասյան փողոցի թիվ 1 հասցեում գտնվող Մերգելյանի անվան զբոսայգում Նորիկ Միքաելյանը Գոռ Ասատրյանին է փոխանցել 5 և 5,1 գրամ քաշերով «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ 2 փաթեթ և հանձնարարել դրանցից մեկը, Մուշեղ Կոստանյանի հետ թմրամիջոց ձեռք բերելու վերաբերյալ նախորդ օրն ունեցած պայմանավորվածության համաձայն, նույն օրը՝ ժամը 15:00-ին, Երևան քաղաքի Կասյան փողոցի թիվ 3 շենքի բակում փոխանցել Հրակ Թաշջյանին, սակայն Գոռ Ասատրյանը նույն օրը՝ ժամը 15:00-ին, թմրամիջոց ապօրինի իրացնելու կասկածանքով Երևան քաղաքի Կասյան փողոցի թիվ 5 հասցեի հարակից տարածքից բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժին, որտեղ վերջինիս անձնական խուզարկությամբ հայտնաբերվել են 10,1 գրամ ընդհանուր քաշով «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ վերը նշված 2 փաթեթները:

Հանցավոր կազմակերպության մասնակից Հովհաննես Հակոբյանը, ի կատարումն հանցավոր կազմակերպության նպատակների, Մարտիրոս Աղայանի և Բենյամին Ասատրյանի միջոցով իրացման նպատակով պարբերաբար ձեռք է բերել առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ՝ հանցավոր կազմակերպության ղեկավարներին փոխանցելով համարժեք գույք: Մասնավորապես, 2020 թվականի մայիս ամսին Հովհաննես Հակոբյանը Մարտիրոս Աղայանի ցուցումով կապ է հաստատել Բենյամին Ասատրյանի հետ և վերջինիս մատնանշած վայրից՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանում գտնվող «Ռենեսանս» ռեստորանային

համալիրի մուտքայքում գտնվող արագաչափ սարքի մուտից ապօրինի ձեռք է բերել շուրջ 50 գրամ «Հերոին» տեսակի թմրամիջոց, իսկ 2020 թվականի հունիսի 4-ին «Արմավիր» բժշկական կենտրոնի մուտքայքում Հովհաննես Հակոբյանին հանդիպել է Բենյամին Ասատրյանը և իրացման նպատակով պահելու համար վերջինիս փոխանցել ընդհանուր 520 գրամ «Հերոին» տեսակի թմրամիջոց:

Այնուհետև, Հովհաննես Հակոբյանը 2020 թվականի մայիս ամսին «Ռենեսանս» ռեստորանային համալիրի մուտքայքում գտնվող արագաչափ սարքի մուտից ապօրինի ձեռք բերած շուրջ 50 գրամ «Հերոին» տեսակի թմրամիջոցից 15,65 գրամը 2020 թվականի հունիսի 12-ին Երևան քաղաքի Միքայելյան 74 շենքի բակում 80000 ՀՀ դրամով իրացրել է Իգոր Գալստյանին և վերջինիս օժանդակությամբ՝ Գևորգ Տերտերյանին, որից հետո նույն օրը Գևորգ Տերտերյանը բերման է ենթարկվել ոստիկանության Կենտրոնականի բաժին, որտեղ նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է Հովհաննես Հակոբյանի կողմից վերջինիս իրացված 9,75 գրամ «Հերոին» տեսակի թմրամիջոցը, իսկ Հովհաննես Հակոբյանի կողմից Իգոր Գալստյանին իրացված 5,9 գրամ «Հերոին» տեսակի թմրամիջոցը հայտնաբերվել է վերջինիս՝ Երևան քաղաքի Միքայելյան 74-րդ շենքի 2-րդ բնակարանում 2020 թվականի հունիսի 13-ին կատարված խուզարկության ժամանակ:

2020 թվականի հունիսի 13-ին Հովհաննես Հակոբյանը թմրամիջոց իրացնելու կասկածանքով բերման է ենթարկվել ոստիկանության Կենտրոնականի բաժին, որտեղ վերջինիս անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է 0,66 գրամ «Հերոին» տեսակի թմրամիջոց, իսկ 2,45 գրամ նույն տեսակի թմրամիջոցից հայտնաբերվել է 2020 թվականի հունիսի 13-ին վերջինիս «Աուդի» մակնիշի 16 ZZ 999 հ/հ-ի ավտոմեքենայի խուզարկությամբ: «Արմավիր» բժշկական կենտրոնի մուտքայքում Բենյամին Ասատրյանի կողմից Հովհաննես Հակոբյանին իրացման նպատակով պահելու համար փոխանցված ընդհանուր 520 գրամ «Հերոին» տեսակի թմրամիջոցը առգրավվել է 2020 թվականի հունիսի 15-ին Արմավիր քաղաքի Մաշտոցի 140 տան բակում գտնվող պետքարանից:

Դրանից բացի, հանցավոր կազմակերպության նպատակների իրագործման նպատակով հանցավոր կազմակերպության մասնակից Միսակ Ազնաուրյանը

Մարտիրոս Աղայանի հանձնարարությամբ քնությամբ դեռևս չպարզված անձի միջոցով ապօրինի ձեռք է բերել առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 790 գրամ «Հերոին» տեսակի թմրամիջոց, ինչպես նաև 0,584 գրամ քաշով «Մորֆին», 0,930 գրամ «Ացետիլկոդեին» և 0,277 գրամ «Հերոին» (դիացետիլմորֆին) տեսակի թմրամիջոցների պարունակությամբ զանգված, որից հետո 790 գրամ «Հերոին» տեսակի թմրամիջոցը հանցավոր կազմակերպության անդամ Հովհաննես Հակոբյանին փոխանցելու նպատակով տեղադրել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանում գտնվող «Ռենեսանս» ռեստորանային համալիրի մոտակայքում գտնվող արագաչափ սարքի մոտ, որը հայտնաբերվել է 2020 թվականի հունիսի 16-ին կատարված դեպքի վայրի զննությամբ, իսկ 0,584 գրամ քաշով «Մորֆին», 0,930 գրամ «Ացետիլկոդեին» և 0,277 գրամ «Հերոին» (դիացետիլմորֆին) տեսակի թմրամիջոցների պարունակությամբ զանգվածն առգրավվել է 2020 թվականի հունիսի 22-ին Միասակ Ազնաուրյանի բնակության վայր հանդիսացող Երևան քաղաքի Նորք-Մարաշ 13-րդ փողոցի 74 հասցեում գտնվող առանձնատան տանիքից:

Բացի այդ, շարունակելով հանցավոր գործունեությունը, դրա անդամներ Նորիկ Միքաելյանը և Գոռ Ասատրյանը, ի կատարումն հանցավոր կազմակերպության նպատակների, առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների հերթական տեղափոխումն ապահովելու նպատակով իրենց ծանոթ Վարազդատ Մարյանին նախ ծանոթացրել են Բենյամին Ասատրյանի հետ, ապա ուղղորդել կապ հաստատել Մարտիրոս Աղայանի հետ՝ տրամադրելով վերջինիս հեռախոսահամարը: Մարտիրոս Աղայանի հանձնարարությամբ Վարազդատ Մարյանը 2020 թվականի հոկտեմբերի 16-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում, իր կողմից վարվող «Կիա» մակնիշի 34 RC 477 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով Երևան քաղաքից ուղևորվել է Սյունիքի մարզի Ներքին Հանդ գյուղի մոտակայք, որտեղ 2020 թվականի հոկտեմբերի 17-ին՝ ժամը 03:00-ի սահմաններում, գործով դեռևս չպարզված անձանցից Երևան քաղաք ապօրինի փոխադրելու նպատակով ապօրինի ձեռք է բերել մաքսանենգությամբ՝ առանց մաքսային հսկողության ապօրինի ՀՀ տեղափոխված առանձնապես խոշոր չափերով՝ 4964 գրամ «Ափիոն», առանձնապես

խոշոր չափերով՝ 4982 գրամ «Հերոին», առանձնապես խոշոր չափերով՝ 3965 գրամ «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցներ: Հիշյալ թմրամիջոցների խմբաքանակը տեղադրել է իր կողմից վարվող «Կիա» մակնիշի 34 RC 477 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի սրահում և ուղևորվել քաղաք Երևան, սակայն ճանապարհին բռնվել է ՀՀ ոստիկանության Կապանի բաժնի աշխատակիցների կողմից, իսկ «Կիա» մակնիշի 34 RC 477 հաշվառման համարանիշի ավտոմեքենայում հայտնաբերվել են վերը նշված թմրամիջոցները:

Բացի այդ, հանցավոր կազմակերպության ղեկավար Մարտիրոս Աղայանը հանցավոր կազմակերպության գործունեության շրջանակներում ապօրինի ձեռք բերած «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցի իրացումն ապահովելու նպատակով համաձայնություն է ձեռք բերել Ստեփան Հովհաննիսյանի հետ, որի շրջանակներում վերջինս Մարտիրոս Աղայանի մատնանշած վայրերից վերցրել է ապօրինի իրացնելու նպատակով Երևան քաղաքի տարբեր հատվածներում, այդ թվում՝ Նոր Նորքի 7-րդ զանգվածում, Դավիթ Բեկ փողոցից Նոր Նորքի 7-րդ զանգված տանող ճանապարհին գտնվող մատուռում և այլ վայրերում նախապես տեղադրված տարբեր քաշերի «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցների պարունակությամբ փաթեթներ, որոնք կրկին Մարտիրոս Աղայանի ցուցումով փոխադրել և տեղադրել է նրա կողմից նշված՝ հատակ կոորդինատներով վայրեր՝ դրա դիմաց ստանալով վարձատրություն: Նշվածից բացի, Ստեփան Հովհաննիսյանն իրականացրել է թմրամիջոցի վաճառք, որի դիմաց վճարումները ստացել է իր կողմից կառավարվող «Իդրամ» հաշվեհամարին: Նշված եղանակով թմրամիջոցների վաճառքից գոյացած գումարները Ստեփան Հովհաննիսյանը փոխանցել է Մարտիրոս Աղայանի կողմից տրամադրված «ՍԲԵՐԲԱՆԿ» և «ԱՅԴԻԲԱՆԿ» բանկային հաշվեհամարներին, որից «ԱՅԴԻԲԱՆԿ» բանկային հաշվեհամարի օգտատերը հանդիսացել է Բենյամին Ասատրյանը:

2022 թվականի ապրիլի 6-ին Ստեփան Հովհաննիսյանը պայմանավորվածություն է ձեռք բերել Աշոտ Հովհաննիսյանի հետ նրան «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց ապօրինի իրացնելու վերաբերյալ, որից հետո Աշոտ Հովհաննիսյանը թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու նպատակով

Ստեփան Հովհաննիսյանի կողմից փաստացի շահագործվող, սակայն նրա կնոջ՝ Մարինե Միքայելյանի տվյալներով նույնականացված «Ի ԴՐԱՄ» հավելվածի 845306035 հաշվառման հաշվին արտոնագրված «055-686868» հաշվեհամարին «ԹԵԼ-ՄԵԼ» տերմինալի միջոցով փոխանցել է 24.750 ՀՀ դրամ: Այնուհետև Ստեփան Հովհաննիսյանն իրացնելու նպատակով Երևան քաղաքի Կոմիտասի պողոտայից դեպի Գրիգոր Արծրունի փողոց տանող հատվածից ապօրինի ձեռք է բերել խոշոր չափերով՝ ընդհանուր 0,94 գրամ քաշով «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ երկու փաթեթ, որից հետո նույն օրը Երևան քաղաքի Գրիգոր Արծրունի փողոցում հանդիպել է Աշոտ Հովհաննիսյանին և նրան ապօրինի իրացրել խոշոր չափերով՝ 0,49 գրամ քաշով «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց: 2022 թվականի ապրիլի 6-ին Աշոտ Հովհաննիսյանը թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու, պահելու և օգտագործելու կասկածանքով բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժին, որտեղ կատարված նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է 0,49 գրամ քաշով «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց: Նույն օրը թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու, պահելու և իրացնելու կասկածանքով բերման է ենթարկվել Ստեփան Վալենտինի Հովհաննիսյանը, ով բերման ենթարկելու ընթացքում մոտից նետել է 0,45 գրամ քաշով «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցով փաթեթը, ինչն էլ վերցվել է դեպքի վայրի զննության ժամանակ:

Բացի այդ, հանցավոր կազմակերպության ղեկավարներից Արթուր Հակոբյանը, տևական ժամանակ անմիջականորեն մասնակցելով հանցավոր գործունեությանը, իր անմիջական ղեկավարմամբ գործող հանցակիցների միջոցով ապահովելով ինչպես Բենյամին Ասատրյանից ստացված այնպես էլ իր մասնակցությամբ մաքսանենգությամբ ՀՀ տեղափոխված առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների իրացմանը, նշված կազմակերպության գործունեության շրջանակներում ապօրինի ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով տարբեր տեսակի թմրամիջոցների հերթական խմբաքանակների իրացումն ապահովելու նպատակով հանցավոր կազմակերպության մասնակիցներ Սարո Դաշտոյանի և Հայկ Գրիգորյանին պարբերաբար հանձնարարել է դրանք տեղափոխել հանցավոր

կազմակերպության մասնակից Վիկտորյա Միրզոյանի կողմից թմրամիջոցներ պահելու նպատակով վարձակալած ավտոտնակ, որից հետո հանցավոր կազմակերպության կազմում ընդգրկված նշված, ինչպես նաև այլ անձանց միջոցով կազմակերպել դրանց բաժանումը տարբեր քաշերի և տեղադրումը թաքստոցներում: Արթուր Հակոբյանից ստացած թմրամիջոցներն իրացնելու նպատակով հանցավոր կազմակերպության մասնակից Զաքար Հայրիկյանը «Տելեգրամ» սոցիալական ցանցում ստեղծել է իր՝ 077 142914 և +7 925 601-62-98 հեռախոսահամարներով նույնականացված օգտահաշիվները, որոնցով վերջինս և Վիկտորյա Միրզոյանը 2021 թվականի ամռանից մինչև 2022 թվականի հոկտեմբերի սկիզբն ընկած ժամանակահատվածում, նամակագրություն են վարել թմրամիջոց ձեռք բերելու համար առցանց իրենց դիմած անձանց հետ՝ պայմանավորվելով պատվիրված թմրամիջոցի քանակի, դրա տեղադրման վայրի և գումարի ստացման պայմանների վերաբերյալ, իսկ թմրամիջոցների ապօրինի վաճառքի գումարները գնորդները փոխանցել են հանցակիցների կողմից կառավարվող էլեկտրոնային դրամապանակներին: Հանցավոր կազմակերպության կողմից իրացնելու նպատակով ձեռք բերված թմրամիջոցների մի մասը հայտնաբերվել և առգրավվել է քննության ընթացքում, որից 2022թ. հոկտեմբերի 10-ին ձերբակալված Վիկտորյա Միրզոյանի անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է առանձնապես խոշոր չափերով՝ 7,22 գրամ «Մեթամֆետամին» և առանձնապես խոշոր չափերով՝ 3,63 գրամ «Հերոին» տեսակի թմրամիջոցներ, իսկ Վիկտորյա Միրզոյանի բնակության վայր հանդիսացող Երևան քաղաքի Մելիքյան 52 տանը 2022թ. հոկտեմբերի 11-ին կատարված խուզարկությամբ՝ առանձնապես խոշոր չափերով 159,37 գրամ «Մեթամֆետամին», առանձնապես խոշոր չափերով՝ 11,04 գրամ «Հերոին» և զգալի չափերով՝ 6,36 գրամ «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցներ: 2022թ. հոկտեմբերի 14-ին կատարված դեպքի վայրի զննության ընթացքում Վ.Միրզոյանի կողմից վարձակալված Երևան քաղաքի Մելիքյան 52 տան հարևանությամբ գտնվող ավտոտնակում կայանված 2117-220 մոդելի 776 US 65 համարանիշի ավտոմեքենայի սրահի տեսանելի հատվածից հայտնաբերվել և վերցվել են առանձնապես խոշոր չափերով՝ 450 գրամ «Ացետիլացված ափիոն», առանձնապես խոշոր չափերով՝ 987,5

գրամ «Ափիոն», առանձնապես խոշոր չափերով՝ 277,6 գրամ «Մեթամֆետամին», առանձնապես խոշոր չափերով՝ 686,48 գրամ «Մարիխուանա», առանձնապես խոշոր չափերով՝ 1,21 գրամ «Կոկաին», խոշոր չափերով՝ 3,964 գրամ «Հաշիշի յուղ», խոշոր չափերով՝0,38 գրամ «ՄԴՄԱ», խոշոր չափերով՝0,17 գրամ «Հերոին» տեսակի թմրամիջոցներ:

Բացի այդ, հանցավոր կազմակերպության գործունեության շրջանակներում դրա մասնակիցներից Զաքար Հայրիկյանի կողմից իրացնելու նպատակով ապօրինի ձեռք բերված խոշոր չափերով՝ 13,16 գրամ «Հաշիշ» և մանր չափերով՝ 1,51 գրամ «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցները հայտնաբերվել և վերցվել են 2021 թվականի սեպտեմբերի 16-ին կատարված վերջինիս անձնական խուզարկությամբ, իսկ առանձնապես խոշոր չափերով՝ 8,34 գրամ «Մեթամֆետամին», խոշոր չափերով՝ 13,14 գրամ «Հաշիշ», զգալի չափերով՝ 6,29 գրամ «Մարիխուանա», մանր չափերով՝ 0,02 գրամ «MMBA(N)-BZ-F» տեսակի թմրամիջոցները՝ Զաքար Հայրիկյանի կողմից շահագործվող «Opel Astra» մակնիշի 37 AO 441 հաշվառման համարանիշի ավտոմեքենայում 2021 թվականի սեպտեմբերի 23-ին կատարված խուզարկությամբ:

Բացի այդ, Զաքար Հայրիկյանի կողմից Անդրանիկ Գալստյանին իրացված խոշոր չափերով՝ 0,52 գրամ «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցը հայտնաբերվել է 2021 թվականի սեպտեմբերի 16-ին կատարված վերջինիս ավտոմեքենայի զննությամբ, Սարգիս Ավետիսյանին ապօրինի իրացված խոշոր չափերով՝ 0,65 գրամ, Արթուր Մանուկյանին իրացված զգալի չափերով՝ 0,14 գրամ «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցները հայտնաբերվել են 2021 թվականի սեպտեմբերի 16-ին կատարված վերջիններիս անձնական խուզարկությունների ժամանակ, իսկ Գրիգոր Միքայելյանին ապօրինի իրացված առանձնապես խոշոր չափերով՝10.18 գրամ «Մեթամֆետամին», առանձնապես խոշոր չափերով 3,37 գրամ «Հերոին» և մանր չափերով՝ 0,97 գրամ «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցները հայտնաբերվել են 2021 թվականի դեկտեմբերի 7-ին կատարված անձնական խուզարկություններով և «Mazda» 6» մակնիշի 40 TT 005 հաշվառման համարանիշի ավտոմեքենայում 2021թ. դեկտեմբերի 13-ին կատարված խուզարկությամբ:

Մարտիրոս Աղայանի, Բենյամին Ասատրյանի և մյուսների հետ համատեղ իրականացվող հանցավոր գործունեության շրջանակներում, ի կատարումն հանցավոր կազմակերպության նպատակների, իրացնելու նպատակով անձամբ Արթուր Հակոբյանի կողմից շրջանառված առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցի մի մասը՝ առանձնապես խոշոր չափերով 6,33 գրամ քաշով «Մեթամֆետամին» և առանձնապես խոշոր չափերով՝ 503,74 գրամ քաշով «Հերոին» տեսակի թմրամիջոցները հայտնաբերվել և վերցվել են 2022 թվականի փետրվարի 10-ին կատարված դեպքի վայրի զննությամբ, առանձնապես խոշոր չափերով՝ 1260 գրամ քաշով «Մեթամֆետամին» տեսակի և խոշոր չափերով՝ 30,18 գրամ քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցները՝ 2022 թվականի փետրվարի 11-ին Արթուր Հակոբյանի կողմից շահագործվող «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի ավտոմեքենայում կատարված խուզարկությամբ, իսկ Ա.Հակոբյանի կողմից անձամբ Սուրեն Մոսինյանին իրացված առանձնապես խոշոր չափերով՝ 5,6 գրամ քաշով «Մեթամֆետամին» և մանր չափերով ընդհանուր՝ 0,84 գրամ քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցները հայտնաբերվել և վերցվել են Ս.Մոսինյանի վարձակալած ավտոտնակում 2022 թվականի մարտի 7-ին կատարված դեպքի վայրի զննությամբ: Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել է նաև Ա.Հակոբյանի կողմից ապօրինի ձեռք բերած հրազեն հանդիսացող «ТТ» տեսակի 7,62 տրամաչափի «БМ 2374» համարի ակոսափող ատրճանակ՝ լիցքավորված 6 փամփուշտներով, ռազմամթերք հանդիսացող թվով 19 տարբեր տրամաչափի ակոսափող հրազենների փամփուշտներ և ռազմամթերք հանդիսացող 1972 թվականի գործարանային արտադրության «Ф-1» տեսակի ձեռքի բեկորային մարտական նռնակ:

Արթուր Հակոբյանի կողմից անձամբ իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերը նշված դեպքերի բացահայտումից հետո, դրա վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում քննվող 12161322 քրեական վարույթի շրջանակներում, նախաքննությանն աջակցելու և համագործակցության պայմանք ստեղծելու նպատակով հանցավոր

կազմակերպության մասնակիցներ Հայկ Գրիգորյանի, Սարո Դաշտոյանի և Վիկտորյա Միրզոյանի ներգրավմամբ, գիտակցելով իր տրամադրած տեղեկատվության կեղծ լինելը, Արթուր Հակոբյանը կատարել է սուտ մատնություն, որը զուգորդվել է առանձնապես ծանր հանցանքների մեջ մեղադրելով և մեղադրանքի արհեստական ապացույցներ ստեղծելով: Նշված նպատակներն իրագործելու համար հիշյալ վարույթով 2022 թվականի մայիսի 6-ին որպես մեղադրյալ ցուցմունք տալիս Ա.Հակոբյանը հայտնել է, որ ԻԻՀ քաղաքացի ոմն Աբո անունով անձը ՀՀ-ում զբաղվում է թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ, որը մաքսանենգությամբ ապօրինի ՀՀ է տեղափոխում բեռնատարների վարորդների միջոցով՝ թմրամիջոցը ավտոմեքենայի նախապես պատրաստված թաքստոցում տեղադրելու եղանակով: 2022 թվականի մայիսի 11-ից 14-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ մուտք է գործելու բեռնատար, որը Աբոյին պատկանող 2-3 կգ «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցը տեղափոխելու է Երևան: Բեռնատարի համարանիշը և մոդելը կհայտնի Երևան հասնելուց 2-3 ժամ առաջ:

Դրանից հետո, քննությամբ չպարզված հանգամանքներում տեղեկանալով, որ ԻԻՀ-ից ՀՀ է շարժվել բեռնափոխադրում իրականացնող ավտոմեքենա պարսիկ վարորդով, հանցավոր կազմակերպության անդամ Վիկտորյա Միրզոյանին հանձնարարել է փաթեթավորել մոտ 2 կգ «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց, այն տեղադրել մետաղյա տարայում, որից հետո տալ հանցավոր կազմակերպության անդամներ Սարո Դաշտոյանին և Հակ Գրիգորյանին՝ այդ բեռնատարի կցորդիչին մագնիսներով ամրացնելու նպատակով: Դրանից հետո Վիկտորյա Միրզոյանը ստացած ցուցումի համաձայն՝ փաթեթավորել է մոտ 2 կգ «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց, փաթեթին իրական տեսք հաղորդելու՝ ԻԻՀ-ից տեղափոխված լինելու տպավորություն ստեղծելու նպատակով դրա վրա ամրացրել է պարսկերեն գրառումներով թուղթ, դրել մետաղյա տարայի մեջ, որից հետո Երևան քաղաքի Շերամի 87 շենքի իր վարձակալած բնակարանում այն փոխանցել է Հայկ Գրիգորյանին և Սարո Դաշտոյանին:

Իրացնելով ստացված տվյալները՝ թիվ 12161322 քրեական վարույթի շրջանակներում ձեռնարկված համապատասխան միջոցառումների արդյունքում 2022 թվականի մայիսի 10-ին՝ ժամը 21:50-ին, Երևան-Երասխ ավտոճանապարհի Շահումյան գյուղի հատվածից՝ ՀՀ մաքսանենգ ճանապարհով թմրամիջոցներ ապօրինի տեղափոխելու, պահելու և իրացնելու կասկածանքով իր վարած «Վոլվո» մակնիշի 12 AA 221 հաշվառման համարանիշի բեռնատար ավտոմեքենայով ՀՀ ոստիկանության Արտաշատի բաժին բերման է ենթարկվել Բեհզադ Սաղեղի Ալիմազանին և վերջինիս ուղևոր Ռալուս Հասանի Շաբանոադվարին, իսկ բեռնատար ավտոմեքենայի խուզարկությամբ ոչինչ չի հայտնաբերվել:

Տեղեկանալով այդ մասին՝ Արթուր Հակոբյանը 2022 թվականի մայիսի 21-ին պաշտպանի միջոցով վարույթն իրականացնող մարմնին հայտնել է, որ ԻԻՀ քաղաքացին, ում տվյալները ճշտվում են, պատրաստվում է մաքսանենգությամբ ՀՀ ներմուծել առանձնապես խոշոր չափերով՝ 1 կգ «Մեթամֆետամին» և 1 կգ «Հերոին» տեսակի թմրամիջոցներ, որոնք վարորդը նախապես թաքցնելու է ավտոմեքենայի վրա հատուկ հարմարեցված պահեստարանում: Այնուհետև, հաղորդագրություն է ուղարկել Վիկտորյա Միրզոյանին, որ նախորդ անգամ բեռնատարի կցորդիչին ամրացված թմրամիջոցը ընկել ու կորել է և նրան կրկին հանձնարարել է նույն ձևով պատրաստել 2 կգ «Մեթամֆետամին» և «Հերոին» տեսակի թմրամիջոցների պարունակությամբ փաթեթներ և փոխանցել Հայկ Գրիգորյանին և Սարո Դաշտոյանին:

Դրանից հետո Արթուր Հակոբյանի հանձնարարությամբ Հայկ Գրիգորյանը և Սարո Դաշտոյանը, Վիկտորյա Միրզոյանից վերցնելով հանցավոր կազմակերպության գործունեության շրջանակներում իրացման համար նախատեսված առանձնապես խոշոր չափերով՝ 930 գրամ «Հերոին» և առանձնապես խոշոր չափերով՝ 1005 գրամ «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցների պարունակությամբ, 15x20սմ չափերի, չորս կողմից փակ և զոդված մետաղյա արկղը, մեղադրանքի արհեստական ապացույցներ ստեղծելու նպատակով մետաղալարով և պարանով գաղտնի ամրացրել են Բեհրուզ Ֆարմանի Անգուտիին պատկանող և նրա կողմից վարած «ՍԿԱՆԻԱ» մակնիշի, 34 AA 367

հաշվառման համարանիշի բեռնատար ավտոմեքենայի 34 AA 368 հաշվառման համարանիշով կցորդիչի տակ՝ հետնամասի պահեստային անվադողերի միջնամասում, որը հայտնաբերվել է 2022 թվականի մայիսի 22-ին մաքսանենգ ճանապարով Հայաստանի Հանրապետություն թմրամիջոցներ ներմուծելու, պահելու և իրացնելու կասկածանքով Բեհրուզ Անգուտիին իր վարած «ՍԿԱՆԻԱ» մակնիշի, 34 AA 367 հաշվառման համարանիշի բեռնատար ավտոմեքենայով Վայոց ձորի մարզի Ելփին բնակավայրի մոտից ՀՀ ոստիկանության Եղեգնաձորի բաժին բերման ենթարկելուց հետո կատարված բեռնատար ավտոմեքենայի 34 AA 368 հաշվառման համարանիշի կցորդիչի զննության ժամանակ: Հիշյալ դեպքի առթիվ հարուցված թիվ 37154122 քրեական գործով Բեհրուզ Ֆարմանի Անգուտիի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով նախատեսված առանձնապես ծանր հանցանքների կատարման համար, որը, դեպքի իրական հանգամանքները պարզելուց հետո, 2023 թվականի դեկտեմբերի 11-ի որոշմամբ դադարեցվել է:

Բացի այդ, թմրամիջոցների իրացումից ստացված առանձնապես խոշոր չափերով ֆինանսական միջոցների հանցավոր ծագումը, դրանց իրական բնույթը թաքցնելու, հանցավոր ճանապարհով ստացված ֆինանսական միջոցների տեղաշարժն ու տեղաբաշխումը քողարկելու, դրանց օրինական տեսք հաղորդելու նպատակով հանցավոր ճանապարհով ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով միջոցների կենտրոնացումը և դրանով պայմանավորված իրավասու մարմինների տեսադաշտում հայտնվելը բացառելու, հնարավոր բացահայտումից խուսափելու և հետագա հանցավոր գործունեությունն անխոչընդոտ շարունակելու համար հանցավոր գործունեությունից գոյացած ֆինանսական միջոցներն ստանալու, մասնատելու և շրջանառելու համար օգտագործվել են բազմաթիվ էլեկտրոնային դրամապանակներ, բանկային հաշիվներ և բուքմեյքերական ընկերությունների օգտահաշիվներ: Միևնույն ժամանակ հանցավոր կազմակերպության ղեկավարների կողմից հանցավոր գործունեությանը ներգրավված անձանց հանձնարարվել է ֆինանսական միջոցների կապը հանցավոր գործունեության հետ հնարավորինս

քողարկելու նպատակով առավելապես օգտագործել վճարային տերմինալների միջոցով անանուն կանխիկ մուտքագրումները: Նշված վճարային գործիքներին մուտքագրված ֆինանսական միջոցները հետագայում փոխանցվել են տարբեր էլեկտրոնային դրամապանակների, բանկային հաշիվների, բուքմեյքերական ընկերություններում բացված օգտահաշիվների, կանխիկացվել կամ այլ կերպ տնօրինվել են հանցավոր գործունեությանը ներգրավված անձանց կողմից:

Հանցավոր կազմակերպության ղեկավարներ Բենյամին Ասատրյանի, Արթուր Հակոբյանի և մասնակիցներ Զաքար Հայրիկյանի, Սարո Դաշտոյանի, Հայկ Գրիգորյանի, Վիկտորյա Միրզոյանի կողմից օգտագործված էլեկտրոնային սարքերով հասանելիություն է ստացվել 193 էլեկտրոնային դրամապանակների: Հիշյալ դրամապանակներին և Բենյամին Ասատրյանի 4318290090918869 համարի բանկային քարտին մուտքագրվել է առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 2.207.175.394 ՀՀ դրամ գումար:

Ընդ որում, հանցավոր կազմակերպության ղեկավարների, մասնակիցների, թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը մասնակցություն ունեցած և նրանց հետ անմիջականորեն փոխկապակցված անձանց անուններով նույնականացված միայն 17 վճարային գործիքներին մուտքագրվել է ընդհանուր 658.135.204 ՀՀ դրամ գումար, որից վճարային տերմինալներից մուտքագրվել է 181.109.948 ՀՀ դրամ, բուքմեյքերական ընկերությունների օգտահաշիվներից՝ 179.908.170 ՀՀ դրամ, բանկային հաշիվներից՝ 65.213.171 ՀՀ դրամ, իսկ մնացած մասը հիմնականում փոխանցվել են «Իդրամ» վճարահաշվարկային համակարգում գործող դրամապանակներից և այլ աղբյուրներից:

Այդ թվում, Արթուր Հակոբյանի անվամբ նույնականացված էլեկտրոնային դրամապանակին մուտքագրվել է 209.042.317 ՀՀ դրամ, որից 60.224.368 ՀՀ դրամը վճարային տերմինալներից, 29.470.558 ՀՀ դրամը՝ բանկային քարտերից և հաշիվներից, 67.906.600 ՀՀ դրամը բուքմեյքերական ընկերությունների օգտահաշիվներից, իսկ մնացած գումարից 47.962.543 ՀՀ դրամը՝ «Իդրամ» վճարահաշվարկային համակարգի տարբեր հաշիվներից:

Բենյամին Ասատրյանի անվամբ նույնականացված էլեկտրոնային դրամապանակին մուտքագրվել է 8.262.900 ՀՀ դրամ գումար, որից 6.250.500 ՀՀ դրամը բանկային քարտերից և հաշիվներից, 1.398.210 ՀՀ դրամը վճարային տերմինալներից, մյուս մասը՝ «Իդրամ» վճարահաշվարկային համակարգի այլ դրամապանակներից, իսկ վերջինիս պատկանող 4318290090918869 համարի բանկային քարտին մուտքագրվել է 27.581.601 ՀՀ դրամ գումար, որից 19.699.504 ՀՀ դրամը՝ վճարային տերմինալներից:

Զաքար Հայրիկյանի անվամբ նույնականացված էլեկտրոնային դրամապանակին մուտքագրվել է 70.791.857 ՀՀ դրամ գումար, որից 37.035.752 վճարային տերմինալներից, 9.714.222 ՀՀ դրամը՝ բուքմեյքերական ընկերությունների օգտահաշիվներից, իսկ 23.899.410 ՀՀ դրամը՝ «Իդրամ» վճարահաշվարկային համակարգի այլ դրամապանակներից:

Սարիկ Դաշտոյանի անվամբ նույնականացված էլեկտրոնային դրամապանակին մուտքագրվել է 3.191.577 ՀՀ դրամ, որոնք մեծամասամբ ստացվել են «Իդրամ» վճարահաշվարկային համակարգի այլ դրամապանակներից:

Հայկ Գրիգորյանի անվամբ նույնականացված էլեկտրոնային դրամապանակին մուտքագրվել է 3.675.429 ՀՀ դրամ, որոնք մեծամասամբ ստացվել են «Իդրամ» վճարահաշվարկային համակարգի այլ դրամապանակներից:

Վիկտորյա Միրզոյանի անվամբ նույնականացված էլեկտրոնային դրամապանակին մուտքագրվել է 34.170.283 ՀՀ դրամ, որից 13.461.011 ՀՀ դրամը ստացվել է բուքմեյքերական ընկերությունների օգտահաշիվներից, 1.365.874 ՀՀ դրամը՝ վճարային տերմինալներից, իսկ 19.165.417 ՀՀ դրամը՝ «Իդրամ» վճարահաշվարկային համակարգի այլ դրամապանակներից:

Ստեփան Հովհաննիսյանի կողմից փաստացի օգտագործված էլեկտրանային դրամապանակին մուտքագրվել է 76.685.214 ՀՀ դրամ, որից 34.820.127 ՀՀ դրամը՝ բուքմեյքերական ընկերությունների օգտահաշիվներից, 19.141.149 ՀՀ դրամը՝ տարատեսակ վճարային տերմինալներից, իսկ մյուս մասը հիմնականում ստացվել է «Իդրամ» վճարահաշվարկային համակարգի այլ դրամապանակներից:

Այսինքն Աթուր Հակոբյանին մեղսագրվում է հանրորեն վտանգավոր արարքների կատարում՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 46-399-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 476-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով (...):

Բացի այդ, Արթուր Հակոբյանը, գտնվելով կալանքի տակ և պահվելով «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի՝ «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշմամբ ամրագրված նշված նյութերի շրջանառության կարգը, պայմանները, կիրառվող սահմանափակումներն ու արգելքները սահմանող դրույթների պահանջները, քննությամբ չպարզված ժամանակահատվածում և հանգամանքներում իրացնելու նպատակով ապօրինի ձեռք է բերել առանձնապես խոշոր չափերով՝ 0,835 գրամ քաշով տնայնագործական եղանակով պատրաստված «Հերոին» տեսակի թմրամիջոց և «Պաոլիամենտ» գրառմամբ ծխախոտի տուփի մեջ ապօրինի պահել հագի տաբատի ետնամասում, որը հայտնաբերվել է 2022 թվականի նոյեմբերի 16-ին՝ ժամը 19:45-ի սահմաններում, «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի թիվ 647-րդ խցում օպերատիվ բաժնի ծառայողների կողմից կատարված չնախատեսված խուզարկության ժամանակ:

Այսինքն Աթուր Հակոբյանին մեղսագրվում է հանրորեն վտանգավոր արարքների կատարում՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (...):

Բացի այդ, Արթուր Հակոբյանն ինքնությունը չպարզված անձի և Արմեն Հարությունյանի հետ համատեղ, խմբի կազմում, նախնական համաձայնությամբ խոշոր չափերով՝ 4.000.000 ՀՀ դրամ գումար խարդախությամբ հափշտակելու դիտավորությամբ, նախկինում ավտոմեքենաներ գրավադրելու կապակցությամբ ձևավորված վստահությունը չարաշահելով, 2019 թվականի նոյեմբերի 14-ին Արմեն Հարությունյանի և ինքնությունը չպարզված անձի հետ գնացել են Երևան քաղաքի

Կիևյան փողոցի 13/16 հասցեում գործող «Վ.Ի.Ա.» ՍՊ ընկերության գրավատուն, որտեղ ինքնությունը չպարզված անձի և Արմեն Հարությունյանի հետ համատեղ, խմբի կազմում, նախնական համաձայնությամբ «Վ.Ի.Ա.» ՍՊ ընկերության տնօրեն Աշոտ Բարսեղյանին ներկայացնելու միջոցով օգտագործել են Արեգ Գրիգորյանի անվամբ հաշվառված «PORSCHE CAYENNE GTS 4.8» մակնիշի, 47 GC 777 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի փաստաթղթերը և նշված տրանսպորտային միջոցի օտարման նկատմամբ գործող սահմանափակումներ գրանցված չլինելու վերաբերյալ իբր ՀՀ ոստիկանության ՃՈ ծառայության կողմից 2019թ. նոյեմբերի 14-ին տրված իրավունք վերապահող N 12929949 (027721) կեղծ տեղեկանքը՝ հայտնելով, որ ցանկանում են իրենց ընկերոջը՝ Արեգ Գրիգորյանին պատկանող ավտոմեքենան գրավադրել և 4.000.000 ՀՀ դրամ գումար վերցնել: Այնուհետև Արթուր Հակոբյանը, խաբեությամբ, իրական փաստերի մասին լռելով, Արեգ Գրիգորյանի ՀՀ սահմաններից դուրս գտնվելու պայմաններում, կեղծ տեղեկություններ հայտնելով, իր և Արմեն Հարությունյանի հետ եկած ինքնությունը չպարզված անձին ներկայացրել է որպես վերը նշված ավտոմեքենայի սեփականատեր Արեգ Գրիգորյան, որից հետո վերջինիս հետ ներկայացված կեղծ փաստաթղթի հիման վրա կնքվել է թիվ 9248 վարկային պայմանագիրը: Արդյունքում տրամադրվել է 4.000.000 ՀՀ դրամ գումար, որը խարդախությամբ հափշտակվել է հանցակիցների կողմից:

Այսինքն Աթուր Հակոբյանին մեղսագրվում է հանրորեն վտանգավոր արարքների կատարում՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով և 457-րդ հոդվածի 2-րդ մասով (…)»[1]:

6. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 27-ի՝ քրեական վարույթից նոր վարույթ անջատելու մասին որոշմամբ արձանագրել է հետևյալը *«(…) Ելնելով վերոգրյալից՝ Դատարանը գտնում է, որ արդարադատության շահի պաշտպանության անհրաժեշտության թելադրանքով պետք է թիվ ԵԴ1/0350/01/24 (69138623) քրեական վարույթից Արթուր Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով*

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 23, թերթեր 168-180:

(համապատասխանում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետին) վերագրվող արարքի կապակցությամբ, որ նա, «գտնվելով կալանքի տակ և պահվելով «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի՝ «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշմամբ ամրագրված նշված նյութերի շրջանառության կարգը, պայմանները, կիրառվող սահմանափակումներն ու արգելքները սահմանող դրույթների պահանջները, քննությամբ չպարզված ժամանակահատվածում և հանգամանքներում իրացնելու նպատակով ապօրինի ձեռք է բերել առանձնապես խոշոր չափերով՝ 0,835 գրամ քաշով տնայնագործական եղանակով պատրաստված «Հերոին» տեսակի թմրամիջոց և «Պաոլիամենտ» գրառմամբ ծխախոտի տուփի մեջ ապօրինի պահել հագի տաբատի ետնամասում, որը հայտնաբերվել է 2022 թվականի նոյեմբերի 16-ին՝ ժամը 19:45-ի սահմաններում, «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի թիվ 647-րդ խցում օպերատիվ բաժնի ծառայողների կողմից կատարված չնախատեսված խուզարկության ժամանակ», անջատել նոր քրեական վարույթ, քանի որ մնացյալ մեղադրյալներին վերագրվող ենթադրյալ հանցագործությունների հետ որևէ կերպ չփոխկապակցված վերոգրյալ դրվագի քննությունը մեկ վարույթում արդարացված չէ, ավելին արհեստականորեն բարդացնում է գործի քննությունը, և մաս անջատելը միակ միջոցն է զսպելու քննության ողջամիտ ժամկետները կամ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու ռիսկերը, ինչպես նաև հարկ է նկատել, որ նոր վարույթ անջատելը որևէ կերպ չի կարող բացասաբար ազդել վարույթի արդարացիության վրա»[2]:

7. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 27-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Վերոգրյալի հիման վրա անհրաժեշտ է արձանագրել, որ սույն քրեական գործով մեղադրյալներին վերագրվող՝ 2022 թվականի հոկտեմբեր ամսին կատարված*

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 32, թերթեր 51-90:

վերջին ենթադրյալ հանցավոր արարքը կատարվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի տարածքում, ուստի՝ Դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ1/0350/01/24 քրեական գործն, ըստ տարածքային ընդդատության, պետք է փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին: (…)»[3]*:*

8. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի հոկտեմբերի 14-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Մեջբերված իրավանորմերի համատեքստում դիտարկելով «Քրեական գործն ըստ ընդդատության փոխանցելու մասին» Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2024 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը, գտնում եմ, որ թիվ ԵԴ1/0350/01/24 քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխվել և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցվել չէր կարող, հետևյալ պատճառաբանությամբ.*

- Թեև Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10 հոդվածի կիրառմամբ իրավասու էր ըստ անհրաժեշտության թիվ ԵԴ1/0350/01/24 քրեական գործից անջատել այդ վարույթով մեղադրյալներից որևէ մեկի վերաբերյալ մասը, այնուհանդերձ դատարանն իրավասու չէր նշված որոշման հիմքով փոխել քրեական գործի տարածքային ընդդատությունը, քանի որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը թիվ ԵԴ1/0350/01/24 քրեական գործը վարույթ էր ընդունել ընդդատության կանոնների պահպանմամբ, հետևաբար այդ քրեական գործից որևէ մեղադրյալի վերաբերյալ նոր վարույթի անջատումը գործի ընդդատության փոփոխության վրա ազդել այլևս չէր կարող (…):

- ՀՀ բարձրագույն դատական խորհրդի 2021 թվականի մարտի 25-ի թիվ ԲԴԽ-16-Ն-6 որոշման 15 կետի բովանդակությունը ևս վկայում է այն մասին, որ դատական գործից մաս անջատվելու դեպքում ինչպես անջատված մասը, այնպես էլ գործը՝ որից անջատվել է այն, շարունակում են մնալ ընդդատության կանոնների պահպանմամբ քրեական գործը վարույթ ընդունած դատարանում:

---

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 32, թերթեր 91-127:

- Հակառակ մեկնաբանությունը ոչ միայն չի բխում մեջբերված իրավանորմերի տրամաբանությունից, այլև ուղղակի իմաստազուրկ է դարձնում առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքների ընդդատության քրեադատավարական «կանոնները», քանի որ նման պարագայում ցանկացած դատարան, ստանալով որևէ քրեական գործ, դրանից կարող է «ընտրողաբար» անջատել «իր» դատական տարածքին վերաբերող մասը, դա պատճառաբանել գործը ողջամիտ ժամկետներում քննելու անհրաժեշտությամբ (ՀՀ քրեական օրենսգրքի մեկ հոդվածով մեղադրանքը, որպես կանոն, հնարավոր է քննել առավել կարճ ժամանակահատվածում), այդ կերպ արհեստական հիմքեր ստեղծել վարույթն ըստ տարածքային ընդդատության փոխանցելու համար և այն ուղարկել «հաջորդ» դատարան, որն էլ իր հերթին վարույթի հետ կարող է վարվել նույն կերպ և այդպես շարունակ, ինչն իրավաչափ համարվել չի կարող:

Ավելին՝ նկարագրված իրավիճակն անխուսափելիորեն կհանգեցնի յուրաքանչյուր անձի՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից իր գործի ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունքի խախտմանը, քանի որ չեն գործի յուրաքանչյուր քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնները, իսկ դատարանների կողմից քրեական գործերը վարույթ ընդունելը կողմնակի դիտորդի մոտ կձևավորի սուբյեկտիվիզմի, կամայականության ու անկանխատեսելիության համոզմունք:

Միևնույն ժամանակ դուրս չգալով քննարկվող հարցի էությունից, հարկ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի կարգավորումներն իրենց հերթին ևս հնարավորություն չեն ընձեռում նախքան վարույթի ընդդատության հարցի լուծումը քննարկման առարկա դարձնել գործից նոր վարույթ անջատելու հարցը, քանի որ նախնական դատալսումներում առաջնահերթության կարգով կարող է քննարկվել միայն «մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցը», իսկ վարույթից մաս անջատելու հարցը, լավագույն դեպքում, կարող է քննարկվել «այլ վերաբերելի հարցերի» շրջանակում, որոնք նշված հոդվածում

հաջորդում են «վարույթի ընդդատության հարցին»: Ուշադրության է արժանի նաև այն, որ թիվ ԵԴ1/0350/01/24 քրեական գործից անջատվել է մեղադրյալ Արթուր Պավելի Հակոբյանին մեղսագրվող միայն մեկ հանցանքի վերաբերյալ վարույթ՝ հենց այն վերջին հանցանքի, որը ենթադրաբար կատարվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում: Նշված որոշումը, թեև կայացվել է արդարադատության շահի պաշտպանության անհրաժեշտության թելադրանքով և քրեական գործը ողջամիտ ժամկետում քննելու նպատակով, այնուհանդերձ թիվ ԵԴ1/0350/01/24 քրեական գործի «մասնատումը» հանգեցրել է Արթուր Հակոբյանի՝ արդեն թվով 2 քրեական գործերով մեղադրյալի կարգավիճակ ձեռք բերելուն, ինչն անտրամաբանական է:

Վերոգրյալից ակնհայտ է, որ «Քրեական գործն ըստ ընդդատության փոխանցելու» մասին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2024 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը չի բխել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261 և 263 հոդվածների դրույթներից, քանի որ թիվ ԵԴ1/0350/01/24 քրեական գործը Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների պահպանմամբ և դրանից հետագայում նոր վարույթ անջատելը չէր կարող փոխել գործի ընդդատությունը, իսկ «Քրեական գործի վարույթից նոր վարույթ անջատելու մասին» որոշման ընդունումն, ըստ էության, ստեղծել է քրեական գործն, ըստ տարածքային ընդդատության փոխանցելու արհեստական հիմքեր: (…)»[4]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

9. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյո՞ք ընդդատության կանոնների պահպանմամբ վարույթ ընդունված քրեական վարույթից նոր վարույթ անջատելու և դրանով պայմանավորված քրեական վարույթն

[4] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 32, թերթեր 167-173:

ըստ ընդդատության փոխանցելու վերաբերյալ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունը:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

11.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[5]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[6]:

12. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության*

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[7]*:*

13. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած է ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները

---

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը: (...)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *« 1. Նախնական դատալսումների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(...)

4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:

(...)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա

ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (...)»:

15. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, Արթուր Հակոբյանի և մյուսների վերաբերյալ քրեական վարույթի նախապատրաստական փուլում՝ 2024 թվականի սեպտեմբերի 27-ին, որոշում է կայացրել, Արթուր Հակոբյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով մեղադրանքի մասով նոր վարույթ անջատելու մասին, որից հետո նույն օրվա մեկ այլ որոշմամբ Արթուր Հակոբյանի վերաբերյալ մյուս մեղադրանքներով և մյուսների վերաբերյալ քրեական վարույթն ըստ ընդդատության փոխանցել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան, պատճառաբանելով, որ մեղադրյալներին վերագրվող վերջին ենթադրյալ հանցանքը կատարվել է 2022 թվականի հոկտեմբեր ամսին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի տարածքում[8]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, արձանագրելով, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը թիվ ԵԴ1/0350/01/24 քրեական գործը վարույթ է ընդունել ընդդատության կանոնների պահպանմամբ, գտել է, որ դրանից հետագայում նոր վարույթ անջատելը չէր կարող հիմք հանդիսանալ վարույթի ընդդատությունը փոխելու համար: Միաժամանակ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը գտել է, որ քրեական վարույթից նոր վարույթ անջատելու մասին որոշմամբ, ըստ էության, ստեղծվել են քրեական վարույթն ըստ տարածքային ընդդատության փոխանցելու արհեստական հիմքեր[9]:

16. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով վերոշարադրյալ իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը նախ փաստում է, որ սույն դեպքում վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր

---

[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

իրավասության քրեական դատարան փոխանցելու հիմք է հանդիսացել Ա.Հակոբյանի վերաբերյալ նոր վարույթ անջատելու մասին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը, հետևաբար ընդդատության հարցը հնարավոր չէ որոշել՝ առանց անդրադառնալու տվյալ որոշման իրավաչափությանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ քրեական վարույթների միացումը և անջատումը կանոնակարգող 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Մեկից ավելի անձանց կողմից մեկ կամ ավելի ենթադրյալ հանցանքներ կատարելու կապակցությամբ իրականացվող վարույթից կարող է անջատվել նոր վարույթ, եթե դա թելադրված է արդարադատության շահի պաշտպանության անհրաժեշտությամբ և չի կարող բացասաբար անդրադառնալ վարույթի արդարացիության վրա»:*

Վարույթի նյութերից երևում է, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը նախնական դատալսումների ընթացքում՝ նախքան վարույթի ընդդատության հարցը քննարկման առարկա դարձնելը, որոշում է կայացրել մեղադրյալ Արթուր Հակոբյանի վերաբերյալ միայն մեկ մեղադրանքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, նոր վարույթ անջատելու մասին, այն դեպքում, երբ նրան վերագրվել են մյուս մեղադրյալների ենթադրյալ հանցակցությամբ կատարված, քրեական օրենսգրքով նախատեսված ևս յոթ ենթադրյալ արարքներ: Արդյունքում նույն անձի վերաբերյալ ստեղծվել են երկու առանձին վարույթներ, որոնք, ըստ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշման, պետք է քննվեն տարբեր դատարաններում: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանի քրեական պալատն ընդունելի և հիմնավոր չի կարող համարել Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի այն դատողությունը, որ նոր վարույթ անջատելը չի կարող բացասաբար ազդել վարույթի արդարացիության վրա: Ինչ վերաբերում է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի այն փաստարկին, որ մաս անջատելը միակ միջոցն է զսպելու քննության ողջամիտ ժամկետները կամ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու ռիսկերը, ապա հարկ է նկատել, որ դատական ակտից պարզ

չէ, թե նոր վարույթի անջատումը ինչպե՞ս պետք է ծառայի նշված նպատակներին, բացի այդ հասկանալի չէ, թե ո՞ր վարույթի մասին է խոսքը, հաշվի առնելով, որ երկու վարույթներով էլ Արթուր Հակոբյանին վերագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ենթադրյալ հանցանքի կատարում:

Վերոգրյալից բացի, Վճռաբեկ դատարանի քրեական պալատն ընդունելի է համարում նաև Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատողությունն այն մասին, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ մեղադրյալ Արթուր Հակոբյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նոր վարույթ անջատելու մասին որոշումը չէր կարող հիմք հանդիսանալ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը որոշելու համար: Այլ կերպ, ընդդատության կանոնների պահպանմամբ վարույթ ընդունված քրեական վարույթից նոր վարույթ անջատելը և միայն դրանով պայմանավորված քրեական վարույթն ըստ ընդդատության փոխանցելը, սույն դեպքում չի կարող ընդունելի համարվել, քանի որ նշված մոտեցումը չի կարող ծառայել արդարադատության շահին և կլինի խիստ ձևականացված:

17. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ ընդդատության կանոնների պահպանմամբ վարույթ ընդունված քրեական վարույթից նոր վարույթ անջատելու և դրանով պայմանավորված քրեական վարույթն ըստ ընդդատության փոխանցելու վերաբերյալ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն իրավաչափ չէ:

Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ԵԴ1/0350/01/24 քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Արթուր Պավելի Հակոբյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 46-399-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 476-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով, 255-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով և 457-րդ հոդվածի 2-րդ մասով, Բենյամին Աշոտի Ասատրյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 46-399-րդ 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետով, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, Նորիկ Լաերդի Միքաելյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 46-399-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Հովհաննես Հրաչի Հակոբյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 396-րդ հոդվածի 2-րդ մասով, Միսակ Արամի Ազնաուրյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 335-րդ հոդվածի 1-ին մասով, Սարո Գևորգի Դաշտոյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 476-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով, Զաքար Հայկայի Հայրիկյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով, 393-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 296-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով թիվ ԵԴ1/0350/01/24 քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ